

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԽԱՆԼԱՐԻ ԿԱՐԵՆ ՀՐԱՆՏԻ

**ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹԵԱՆ ԷԹՆՈԿՐՕՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ
(1923 – 2005 թթ.)**

**Է.00.01 «Հայոց պատմութիւն» մասնագիտութեամբ պատմական գիտութիւնների
թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախօսութեան սեղմագիր**

ԵՐԵՒԱՆ-2013

Ատենախօսութեան թեման հաստատուել է ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Մելքոնեան Ա. Ա.

Պաշտօնական ընդդիմախօսներ՝ պատմական գիտութիւնների դոկտոր
Աւագեան Ա. Գ.
բանասիրական գիտութիւնների թեկնածու,
դոցենտ Մելքոնեան Ռ. Հ.

Առաջատար կազմակերպութիւն՝ ՀՀ ԳԱԱ արեւելագիտութեան ինստիտուտ

Ատենախօսութեան պաշտպանութիւնը կայանալու է 2013 թ. մարտի 29-ին, ժամը 14⁰⁰-ին, ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՅ-ի Հայոց պատմութեան 004 մասնագիտական խորհրդում (0019, ք. Երեւան, Մարշալ Բաղրամեան 24/4):

Ատենախօսութեանը կարելի է ծանօթանալ ՀՀ ԳԱԱ պատմութեան ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքուած է 2013 թ. փետրւարի 28-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտութիւնների թեկնածու, դոցենտ

Սուրադեան Հ. Ղ.

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ ՈՒ ԱՐԴԻՎԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ: Հայութեան դեմ իրականացուած պարբերական ջարդերի, բռնի տեղահանութիւնների եւ, յատկապէս, Հայոց ցեղասպանութեան հետեւանքներից մէկը Թուրքիայում մնացած հայ տարրի էթնոկրօնական այլակերպման եւ վերակերպման իրողութիւնն է: Ներկայումս Թուրքիայի Հանրապետութիւնում բնակուող հարիւր հազարաւոր հայեր շարունակում են մաքառել իրենց ազգային ինքնութեան պահպանման համար: Ուստի, վերակերպուած հայութեան իրողութիւնն այսօր՝ հայկական անկախ պետականութեան պայմաններում, հանդիսանում է հայ ազգի էթնիկական դիմագծի պահպանման, ազգային լինելիութեան գերխնդիրներից մէկը:

Նկատի առնելով սոյն հետազօտութեան ընդհանուր սահմանները՝ միւթը ձեռք է բերում քաղաքական, գիտական եւ ճանաչողական նշանակութիւն եւ իր բնոյթով արդիական է: Այն պայմանաւորուած է մեր օրերում էլ իր մասին յիշեցնող հայ տարրի էթնոկրօնական այլակերպման եւ վերակերպման գործընթացի շարունակմամբ: Ուստի ատենախօսութեան շարադրամքը սկսւում է Թուրքիայի Հանրապետութեան ձեւաւորման շրջանից՝ 1920-ականների սկզբից, եւ ներառում է հայ էթնիկական տարրի պատմական ճակատագրի բարդ հոլովոյթը՝ իր **աշխարհագրական շրջագծով, ժամանակագրական հիմունքներով եւ էթնոլոգիական տիպաբանութեամբ:**

Դրանցից իւրաքանչիւրի քննութիւնն առանձին վերցրած նոյնպէս խիստ արդիական է, երբ նկատի ենք առնում այն իրողութիւնը, որ մեր օրերում Թուրքիայում բնակուող հայութեան հետագայ ճակատագրի հարցը սերտօրէն առնչւում է.

- հայ-թուրքական եւ Հայաստան-Թուրքիա միջպետական յարաբերութիւններին,
- արեւմտեան երկրների, մանաւանդ Եւրոմիութեան հետ յարաբերութիւնների խորացման եւ ինտեգրման Թուրքիայի փորձերին,
- Թուրքիայի Հանրապետութեան ներսում քաղաքական ազատութիւնների ընդլայնման ու մարդու իրաւունքների պաշտպանութեան խնդիրներին, ինչպէս նաեւ առկայ էթնոկրօնական հարցերի, յատկապէս քրդական խնդրի լուծման հեռանկարներին:

Այս հարթութիւնների վրայ վերջին տարիներին առաջ եկող բազմաթիւ հարցերը հանդիսանում են Թուրքիայում առկայ հայկական գործօնի անտեսման, նրա իրաւունքների ու ազատութիւնների կոպիտ ոտնահարման հետեւանքը:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՆՊՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախօսութեան նպատակն է հրատարակուած վաւերագրերի, ժամանակակից յուշագրութիւնների, տպագիր մամուլի եւ գիտական ուսումնասիրութիւնների հիման վրա վեր հանել Հայոց ցեղասպանութեան շրջանից յետոյ Թուրքիայի Հանրապետութիւնում (ներկայիս Արեւմտեան Թուրքիայից բացի) գոյատեւած հայութեան էթնոկրօնական այլակերպման ու վերակերպման գործընթացը՝ ներկայացնելով տուեալ տարրի վիճակագրական եւ ժողովրդագրական մօտաւոր պատկերը, լուսաբանել նրա հասարակական կեանքի ու հոգեմտաւոր այժմէական ներաշխարհի ծալքերը:

Այդ նպատակով մեր առջեւ դրել ենք հետեւյալ խնդիրները.

- բացայայտել Թուրքիայի հանրապետության շրջանում վերապրող հայ տարրի գոյության հիմնահարցը, բնութագրել նրա էթնոկրոնական վերակերպումների հոլովոյթը եւ բնորոշել նրա ազգային գիտակցության հետ կապուած հարցերը,

- լուսաբանել նշուած տարրի սոցիալ-տնտեսական պայմանները, քաղաքական կեանքը, հասարակական իրավիճակը եւ մշակութային-հոգեմտաւոր ներաշխարհը,

- սահմանել նշուած տարրի քանակական փոփոխութիւնների դինամիկան եւ ճշտել համապատասխան վիճակագրական մօտաւոր տուեալները:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՍԵՅՈՂԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՍՔԵՐԸ: Նշուած նպատակների իրականացման համար առաջնորդուել ենք արդի պատմագիտութեան կողմից լայնօրէն կիրառուող պատմահամեմատական մեթոդով՝ փորձելով երեւոյթների նախնական ընկալումներից՝ **անալոզիաներից** անցում կատարել նրանց **տութեան եւ բովանդակութեան** քննութեանը, որպէսզի յանգենք պատմական միանման իրողութիւնների պատմահամեմատական ուսումնասիրութեան բուն նպատակին՝ դրանց **տիպաբանութեան** յստակեցմանը:

Հաշուի առնելով, որ մեր կողմից ուսումնասիրուող հիմնահարցը հանդիսանում է շուրջ մէկ դար առաջ տեղի ունեցած իրադարձութիւնների, մասնաւորապէս՝ Հայոց ցեղասպանութեան հետեւանքը, լայնօրէն օգտուել ենք նաեւ պատմագիտական հետազօտութեան **հետահայեաց (ռետրոսպեկտիւ)** մեթոդից:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԵԱՆ ՊԱՏՄԱԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ժամանակային տարածութեան առունով ատենախօսութիւնն ընդգրկում է 1923 թուականից մինչեւ 2005 թուականը:

ԱՏԵՆԱԽՕՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՅԹՆ ՈՒ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ: Ատենախօսութիւնն մէջ առկայ արդիական քաղաքական խնդիրների բազմազանութիւնն ամենեւին էլ չի սահմանափակում մեր քննութեան առարկան հանդիսացող թեմայի գիտաճանաչողական եւ կիրառական նշանակութիւնը: Ցեղասպանութեան ենթարկուած ժողովուրդների պատմական ճակատագրի քննութիւնը յետցեղասպանական իրողութիւնների համատեքստում հանդիսանում է արդի համեմատական ցեղասպանագիտութեան կարեւոր հիմնահարցերից մէկը: Այն թոյլ է տալիս բացայայտել ինչպէս ցեղասպանութեան հետեւանքների յաղթահարման դրական փորձը, այնպէս էլ դրա ժխտման եւ անտեսման արդիւնք հանդիսացող գործընթացները: Համեմատական ցեղասպանագիտութեան դիտանկիւնից Թուրքիայում բնակուող հայութեան ճակատագիրը հանդիսանում է այդ օրինաչափութիւններից երկրորդի արտայայտութիւնը: Ուստի նրա գիտական ուսումնասիրութիւնը բացայայտում է համաշխարհային պատմութեան մէջ դեռեւս աննախադէպ մի փաստ՝ շարունակուող ցեղասպանութեան իրողութիւնը:

Սա վկայում է այն մասին, որ հիմնահարցի գիտական ուսումնասիրութիւնը դուրս է գալիս Հայոց ցեղասպանութեան պատմութեան մեղ շրջագծից եւ վերածուում քսաներորդ դարի պատմութեան մէջ իր ծաւալներով ու խորութեամբ նմանը չունեցող ողբերգութեան հետեւանքների համակողմանի քննութեան, որն աստիճանաբար դառնում է ոչ միայն հայ, այլեւ եւրոպական, ամերիկեան եւ անգամ թուրք այլախոհ պատմաբանների ուսումնասիրութեան առարկան:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹԻՒՆԸ: Ատենախօսութիւնը քննարկուել է եւ երաշխաւորուել հրապարակային պաշտպանութեան ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի Նորագոյն պատմութեան բաժնի կողմից: ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի գիտական խորհրդի հովանաւորութեամբ ատենախօսութեան հիմնական բաժինը հրատարակուել է առանձին մենագրութեամբ 2005 թ.¹: Ուսումնասիրութեան հիմնական խնդիրները լուսաբանուել են «Նորավանք գիտակրթական հիմնադրամ»-ի «21-րդ դար» հանդէսում հրատարակուած հայերեն² եւ ռուսերեն³ յօդուածներում, նոյն հիմնադրամի «տեղեկագրի» առանձին յօդուածում⁴, «Պայման» պարսկալեզու հանդէսում⁵: Ատենախօսութիւնը, որոշ լրացումներով եւ փոփոխութիւններով, Մեծի Տանն Կիլիկիոյ «Խաչիկ Պապիկեան» հրատարակչական հիմնադրամի կողմից լոյս է տեսել Անթիլիասում 2009 թուականին հայերենով⁶ եւ 2010 թուականին անգլերէնով⁷: Ուսումնասիրութեան հիմնադրոյթները ներակայացուել են նաեւ հեղինակի կողմից ընթերցուած մի քանի առանձին զեկուցումներում հանրապետական եւ միջազգային գիտաժողովներում (Սոչի, 2005 թ., Թեհրան, 2006 թ., Նիւ Եորք, 2007 թ., Նիւ Ջերսեյ, 2007 թ., Երեւան, 2008 թ., Պէյրութ, 2008 թ. Ատեփանակերտ, 2010 թ.):

ԹԵՄԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԾՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ (ԱՂԲԻՐՆԵՐԻ ԵՒ ԳՐԱՎԱՆՈՒԹԵԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ): Ատենախօսութեան առաջադրած խնդիրների լուսաբանման նպատակով օգտագործուել են բազմալեզու աղբիւրներ, աղբիւրագիտական նշանակւթյուն ունեցող գրականութիւն, մամուլ, պատմագիտական ուսումնասիրութիւններ:

Քննութեան ենթարկուող հիմնահարցի վերաբերեալ առաջին ուսումնասիրութիւնները կատարուել են դեռեւս Մեծ եղեռնի նախօրէին: Արդէն այդ շրջանում հայ հասարակական ու քաղաքական միտքը փորձում էր ճշտել 1890-ականների համիդեան ջարդերի եւ 1909 թ. Կիլիկիայի հայութեան կոտորածների արդիւնքում կրօնափոխուած հայութեան թուաքանակն ու տեղաբաշխումը: Մասնաւորապէս նման փորձ է ձեռնարկել Սիմաս Գասապեանը (Ֆարիատ, Վերածին): Սոյն աշխատութեան նախաբանում նշանաւոր գործիչ Յարութիւն Շահրիկեանը (Ատոմ) հետաքրքրական հաստատում է կատարում հեղինակի էթնոլոգիական

¹ Կարեն Հ. Խանլարի, Հայ էթնոկրօնական տարրի վերակերպումները Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Երեւան, 2005:

² Կարեն Հ. Խանլարի, Հայ էթնոկրօնական տարրը Արեւնոյան Հայաստանում (1923-2005 թթ.), «21-րդ դար», N 3, Երեւան, 2005, էջ 123-137:

³ Карен Ханларян, АРМЯНСКИЙ ЭТНОРЕЛИГИОЗНЫЙ ЭЛЕМЕНТ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ, «21-й ВЕК», № 2, 2005г., стр. 67-79.

⁴ Կարեն Հ. Խանլարի, «Պաշտօնական» հայերը Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005 թթ.), «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի տեղեկագիր, N 22, Երեւան, 2008, էջ 45-97:

⁵ Կարեն Խանլարի, Անատոլիայի հայ մնացորդացը, «Պայման» մշակութային հանդէս, N 47, Թեհրան, 2009 (պարսկերէն), էջ 23-36:

(کارن خانلری، بازماندگان ارمنی در آناتولی، فصلنامه فرهنگی پیمان، شماره 47، سال سیزدهم، بهار 1388، صفحات 23-36)

⁶ Կարեն Հրատարի Խանլարի (Խանլարեան), Հայ էթնոկրօնական տարրի վերակերպումները Թուրքիայի հանրապետութիւնում (1923-2005 թթ.), Անթիլիաս, 2009:

⁷ Karen Hrant Khanlari (Khanlarian), ETHNO-RELIGIOUS TRANSFORMATIONS OF ARMENIAN INHABITANTS IN THE REPUBLIC OF TURKEY (1923 – 2005), Antelias, 2010.

հայեացքների մասին: «Ֆարհատը Հայութիւնը չհասկնար մէկ եկեղեցիի, կամ քրիստոնէայ յարանուանութիւններու անձուկ սահմանին մէջ,- գրում էր Շահրիկեանը,- այլ աւելի ընդարձակ սահմաններու մէջ, այլակրօններն ալ միասին առնելով, փնտրելով հայութիւնը անոր երակներէն հոսող Հայ արիւնին մէջ, ընդունելով, ընդգրկելով Հայութիւնը՝ օտարացած, խորթացածներով, որոնք աւելի շատ են երկրի, Մայր Հայաստանի մէջ»⁸:

Էթնոլոգիական ման հայեացքներով է հանդէս եկել նաեւ հայ անուանի գրող Գրիգոր Զօհրապը: Նա իր «Հայկական հարցը փաստաթղթերի լոյսի տակ» ֆրանսերէն ուսումնասիրութեան մէջ (1913 թ.) հանգամանօրէն անդրադարձել է աւելի վաղ «իլլամացած» հայութեան մէկ այլ խմբի՝ զազաների հայկական ծագմանը⁹:

Իսկ Հայաստանի առաջին հանրապետութեան օրօք, Բարսեղ Սարգիսեանը 1919 թուականին Վենետիկում հրատարակուած իր «Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի» աշխատութեան մէջ աւելի հանգամանօրէն է ուսումնասիրել կրօնափոխուած հայութեան հիմնահարցը եւ փորձ արել կազմելու այդ խմբի վիճակագրական պատկերը¹⁰:

Յաջորդ տարիներին բազմաթիւ հայ, թուրք եւ եւրոպացի հեղինակներ արծարծել են մեր կողմից ուսումնասիրուող հիմնահարցը եւ տուել իրենց գնահատականը:

Յ. Բ. Հաճեանը 1940-ականներին «Կարսի շրջան կամ Վանանդի նահանգ» ընդարձակ ուսումնասիրութեան վերջին բաժնում կարեւոր եզրակացութիւնների է յանգել «թաքուն» հայութեան ձեւաւորման եւ թուաքանակի կապակցութեամբ¹¹:

Ակադեմիկոս Լեւոն Խաչիկեանն իր 1969 թուականին լոյս ընծայած յօդուածում («էջեր համշէնահայ պատմութիւնից»), գիտական նոր լոյս սփռեց հիմնահարցի շուրջ¹²:

Անտարակոյս, այս շարքին է պատկանում Նաեւ ակադեմիկոս Ծատուր Աղայեանի 1969 թ. հրատարակուած մենագրութիւնը, որտեղ հրապարակուած տեղեկութիւններն ու փաստերը ներկայացնում են ճանաչողական արժէք¹³:

Հիմնահարցին լաւատեղեակ թուրք մտաւորականներից է պրոֆ. Ֆահիր Արմաօղլուն, որն իր աշխատութիւններում անդրադարձել է հայութեան էթնոկրօնական վերակերպումներին¹⁴:

Թուրք հետազօտողների շարքին է պատկանում նաեւ պրոֆ. Սալիմ Ջեօհչէն, ըստ որի «թաքուն», կրօնափոխ հայերն ի վերջոյ վտանգաւոր են լինելու Թուրքիայի համար¹⁵:

Վերջին տարիներին մեր կողմից ուսումնասիրուող հիմնահարցի մասին հետազօտութիւններ կատարող հեղինակներից է Գերմանիայի Մաքս Պլանկի անուան մարդաբանական հաստատութեան (Max Planck Institute for Social Anthropology)

⁸ Գասապեան Մ. Գ., Հայերը Նիկոմիդիոյ գաւառին մէջ, Պարտիզակ, 1913, էջ I-II:

⁹ Տէս Նորք, Երեւան, 1989, դեկտեմբեր, էջ 97:

¹⁰ Տէս Սարգիսեան Հ. Բ. Վ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի, Վենետիկ- Ս. Ղազար, 1919, էջ 13:

¹¹ Տէս Ալիք, Թեհրան, 1945, սեպտեմբերի 21:

¹² Տէս Բանբեր Երևանի համալսարանի, Երևան, 1969, թիվ 2, էջ 139:

¹³ Տէս Աղայան Ծ. Պ., Հայերը Թուրքիայում, Երևան, 1994, էջ 17:

¹⁴ Տէս Նոր Մարմարա, Ստամբուլ, 1988, փետրուարի 17:

¹⁵ <http://www.aksiyon.com.tr/yazdir.php?id=23084>

գիտաշխատող Քրիս Յաննը: Նա 2003 թ. հրապարակուած իր գիտական զեկուցագրում (Պատմութիւնն ու ազգագրութիւնն Անատոլիայում) վերլուծութիւններ է կատարել հիւսիս-արեւելեան Թուրքիայի (Ուիլսոնեան Յայաստանի հիւսիսային շրջանի) էթնիկական խմբերի ազգամիջեան յարաբերութիւնների վերաբերեալ եւ յանգել մի օրինաչափութեան, ըստ որի՝ տարածքի բնակչութեան (համշէնցիներ, լազեր, քարթուելներ, չայելի թուրքեր եւ այլն) սոցիալական յարաբերութիւններում էթնիկական պատկանելութիւնն աւելի քիչ նշանակութիւն է ունենում, քան զուտ տեղական, գաւառական պատկանելութիւնը: Ֆինդիկլիում նրա տեսած լազ ընտանիքներից շատերը խառն ամուսնութիւնների արդիւնք են: Այնուամենայնիւ, նա նշուած ընդհանուր օրինաչափութիւնից բացառում է համշէնցիներին, որոնք Քրիս Յաննի գնահատմամբ՝ խորհրդաւոր կերպով տակաւին գիտակցում են, որ իրենց նախնիները դեռ 200 տարի առաջ խօսել են միւսներից միանգամայն տարբեր լեզուով, եւ այդ գիտակցութեամբ շարունակում են առ այսօր պահել իրենց կապուածութիւնը հայութեան հետ¹⁶:

Թեսսա Յոֆմանն ու Ժիրայր Քոչարեանն իրենց «Քրիստոնէութիւնն Արեւելքի մէջ, Յայ եկեղեցու կենսավէպը» զեկուցագրում ոչ միայն անդրադառնում են 1970 թ. ի վեր Թուրքիայում գործի դրուող պետական հրահանգներին ու մեքենայութիւններին, այլեւ վերլուծում «թաքուն» հայերի սոցիալական ծանր իրավիճակը¹⁷:

Հիմնահարցի վերաբերեալ մանրամասն ուսումնասիրութիւններ է կատարել Ռուդիգեր Բեննինգհաուսը: Նա իր «Շալ ու Շապիկ տղամարդու հագուստի արտադրութիւնը, օգտագործումը եւ տարածումը թուրքական Քրդստանում» գիտական աշխատութիւնում յիշատակում է Շիրնակի շրջանի «թաքուն» հայութեան իրավիճակը 1990-ականներին¹⁸:

Պատմաբան Ուղուր Ունգուրը (ծագումով՝ հաւանաբար քուրդ) Ամստերդամի համալսարանի Պատմութեան ամբիոնում 2005 թ. պաշտպանած ասարտաճառում հանգամանօրէն կանգ է առել բռնի դաւանափոխութեան հարցի վրայ՝ որպէս Յայոց ցեղասպանութեան դառն հետեւանք¹⁹:

Նորագոյն շրջանի ճանաչուած հեղինակներից է դոկտ. Աշոտ Մելքոնեանը, որի մի քանի առանձին աշխատութիւններում եւ գիտական յօդուածներում արծարծուել է հիմնահարցը եւ սահմանուել դրա բուն էութիւնը²⁰:

¹⁶ Տե՛ս Hann C., History and ethnicity in Anatolia, Max Planck Ins. for Social Anthropology, Halle, 2003, p. 13, <http://www.eth.mpg.de/pubs/wps/pdf/mpsi-eth-working-paper-0050.pdf>.

¹⁷ Տե՛ս Ալիք, Թեհրան, 1981, հոկտեմբերի 31:

¹⁸ Տե՛ս Benninghaus R., Production, usage and diffusion of the *Shal o Shapik* Men's Costume in Turkish Kurdistan, 31 May 2001, <http://www.chaldeansonline.net/forums/ruediger-benninghaus.html>

¹⁹ Տե՛ս Ungor U. U., A Reign of Terror, University of Amsterdam, Dep. of History, June 2005, p. 137.

²⁰ Տե՛ս Մելքոնյան Ա., Յայ բնակչության էթնոկրոնական դիմախելման գործընթացներն Արևմտյան Յայաստանում XVI-XVIII դարաշրջանում, (Գիտաժողովի հիմնադրույթներ), Երեւան, 2004, էջ 44: Տե՛ս նաեւ Մելքոնեան Ա., Յամշէն - պատմաաշխարհագրական ակնարկ (16-20-րդ դար), *Յամշէն եւ համշէնահայութիւն (Գիտաժողովի նիւթեր)*, 37 ՉԱԱ Պատմութեան Ինստիտուտ, Երեւան-Պէլյոթ, 2007:

Նորագոյն շրջանի հայ հետազոտողներից է նաեւ Ռուբէն Մելքոնեանը, ում բազմաթիւ մենագրութիւնների, գիտական աշխատութիւնների եւ յօդուածների ընդմիջից չափազանց արժէքաւոր տեղեկութիւններ, վերլուծութիւններ եւ տեսակէտներ են հաղորդուում հիմնահարցի հետ կապուած²¹:

Նկատի առնելով, որ Թուրքիայի Հանրապետութեան հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները, որպէս առանձին հիմնահարց, դեռեւս ամբողջութեամբ գիտական քննութեան չի ենթարկուել, ձեռնարկելով այս գործը փորձել ենք ի մի բերել ասպարէզում առկայ տարբեր սկզբնաղբիւրների տարաբնոյթ վկայութիւնները:

Բանն այն է, որ մէկ կողմից, հասկանալի եւ ծանօթ պատճառներով, Թուրքիայի պաշտօնական վիճակագրութիւնը եւ նրան յենուած պատմագրութիւնը, տարիներ շարունակ, սիստեմատիկօրէն, կեղծել են բուն հիմնահարցը: Միւս կողմից էլ՝ հայ եւ օտար հետազոտողների մօտ, բնականաբար, չի եղել էթնոլոգիական հայեացքների միատեսակութիւն: Հետեւաբար նման հիմնահարցի ուսումնասիրութիւնը հնարաւոր է միայն տարբեր սկզբնաղբիւրների համադրութեան եւ նրանցում առկայ տեղեկութիւնների համապարփակ ուսումնասիրութեան ճանապարհով: Ընդ որում հարկ է ընդգծել, որ ուսումնասիրուող հիմնահարցի պատմագրութեան մէջ մեր թուարկած հրապարակումներից շատերը, օրինակ՝ հէնց վերը նշուած Բարսեղ Սարգիսեանի ուսումնասիրութիւնը²², ունեն նաեւ աղբիւրագիտական կարեւոր նշանակութիւն:

Մեր կողմից ուսումնասիրուած տարաբնոյթ սկզբնաղբիւրների մէջ մեծ թիւ են կազմում հայ, թուրք, քուրդ, իրանցի եւ եւրոպացի հեղինակների տպագիր վկայութիւնները, կենսագրութիւնները, յուշագրութիւնները, ուղեգրութիւնները եւ մամուլում հրապարակուած լրատուութիւնը:

Այս շարքին են պատկանում Կ. Պոլսի հայ պատրիարքների եւ բնիկ, «շրջիկ» կամ «այցելու» քահանաների տպագիր յուշերն ու տպաւորութիւնները, զեկոյցները եւ այլն: Դրանցից կարելի է առանձնացնել Կեսարիայի հոգեւոր հայր Հայկազուն աւագ քահանայ Կարապետեանի գաւառի հայութեան մասին ներկայացրած վիճակագրական պատկերը²³ եւ Շաւարշ քահանայ Պալըմեանի գրչին պատկանող «Ու ես կ'երթամ» հատորը, ուր հետաքրքիր դրուագներ կարելի է գտնել գաւառահայութեան 1960-ականների կեանքի մասին²⁴:

Այս իմաստով ուշագրաւ է Թուրքիայի հայոց պատրիարք Շնորհք արք. Գալուստեանի 1980 թ. երուսաղէնում բանախօսութեան ժամանակ՝ ներկայացրած գաւառներում ապրող հայութեան պատկերը, ուր ոչ միայն նշուում են վիճակագրական կարեւոր տուեալներ, այլեւ կատարուում են տեսական-էթնոլոգիական նշանակութիւն ունեցող հաստատումներ²⁵:

²¹ Տե՛ս Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրների շուրջ, Երևան, 2009: Տե՛ս նաեւ Մելքոնյան Ռ., Իսլամացված հայերի խնդիրը Թուրքիայում, *21-րդ դար*, թիվ 1 (19), 2008:

²² Տե՛ս Սարգիսեան Հ. Բ. Վ., Վիճակագրական նոր տեսութիւն մը ի նպաստ անկախ Հայաստանի, Վեներտիկ-Ս. Ղազար, 1919:

²³ Տե՛ս Հայրենիք տարեգիրք-տօնացոյց, Բոստոն, 1947, էջ 242-244:

²⁴ Տե՛ս Պալըմեան Շ., Ու ես կ'երթամ, Ստամբուլ, 2005:

²⁵ Տե՛ս Ալիք, Թեհրան, 1980, դէկտեմբերի 18:

Նոյն շարքին են պատկանում նաեւ մէկ այլ հոգեւորական՝ Շահէն Մակարեանի վկայութիւնները, որոնք առընչուում են 1970-ականներին սասունցի հայ բեկորների հաւաքական գիտակցութեանն ու կեցուածքին, նրանց գոյատեւման բարդ խնդիրներին²⁶:

Աղբիւրագիտական իմաստով նշանակալից է նաեւ թուրքական «Ձումհուրիթում» թերթի թղթակից Օֆուզ Գիւլդեմիրի 1981 թ. օգոստոսի 12-16-ին լոյս տեսած «Անատոլիայի հայ հայրենակիցները» յօդուածաշարը, ուր յետեղաշրջման շրջանի թարմ տեղեկութիւններ են հաղորդուում գաւառահայութեան մասին²⁷:

Տեղեկութիւնների մի զգալի բաժինը ձեռք ենք բերել տպագիր մամուլից: Թուրքահայ մամուլի էջերում յաճախ կարելի է հանդիպել մեր կողմից առանձնացուած աշխարհագրական տարածքներում 1960-ական թուականներին ծնուած, 1980-ականներին հասարակական կեանք թեւակոխած եւ Ստամբուլում հաստատուած հայերի կենսագրականների, որոնց միջոցով կարելուր տեղեկութիւններ են ձեռք բերուում խնդրոյ առարկայ հայութեան մասին²⁸:

Տեղեկատուական նկատառելի բազա կարելի է համարել Բոստոնի «Հայրենիք ամսագիրը», յատկապէս իր 1930-ական եւ 1960-ական համարների «գաղութ գաղութ» խորագրով հաղորդած կամ մէջբերած լուրերով: Հիմնահարցի վերաբերեալ բազմաբնոյթ եւ բազմաթիւ լրատուութիւնների ենք հանդիպել, ինչպէս Թեհրանում հրատարակուող «Ալիք» օրաթերթի 1940-ականից մինչեւ 1980-ականների, այնպէս էլ «Դրօշակ» պարբերականի 1980-ականների վերջին տարիների եւ 1990-ականների՝ բազմաթիւ համարներում: Իսկ թուրքահայ մամուլում, իրենց անմիջական տեղեկատուական եւ լրագրական անցեալով, առանձնանում են պոլսահայ երկու օրաթերթը՝ «ժամանակ» ու «Նոր Մարմարա»: Այս առումով, մասնաւորապէս, «Նոր Մարմարայի» 2000-ականների համարները տեղեկութիւնների լայն դաշտ են բացում հետազոտողի առջեւ:

Հիմնահարցը լայնօրէն շօշափուում է հայ եւ օտար հեղինակների յուշագրական նիւթերում եւ նմանօրինակ վկայութիւններում: Եւրոպացի Արնոլդ Համէլինը եւ ժան Միշել Բրունը «Վերագտնուած յիշատակը» (*La Mémoire retrouvée*) աշխատութեան մէջ, մէջ են բերել Վանում 1956 թ. ծնուած եւ Ֆրանսիայում հաստատուած մի հայի վկայութիւնները՝ Էրզրումում, Կարսում եւ այլ քաղաքներում ու գիւղերում բազմաթիւ հայ ընտանիքների հետ իր հանդիպումների մասին²⁹:

Քուրդ քաղաքական գործիչ եւ ղեկավար Աբդուլլահ Օջալանը եւս վկայել է «թաքուն» հայերի գոյութեան մասին: Նա 1990-ականների կեսերին, թուրք լրագրող Եալչին Քիւչիւքի վարած մամլոյ ասուլիսի ընթացքում մանրամասներ է հաղորդել հիմնահարցի մասին³⁰:

²⁶ Տե՛ս Բանբեր, 1970, յունուար-փետրուար, թիւ 1-2:

²⁷ Ալիք, Թեհրան, 1981, դեկտեմբերի 9:

²⁸ Տե՛ս օրինակ՝ Սուրբ Փրկիչ, 2001, յունիս-յուլիս, թիւ 620-621, էջ 9:

²⁹ Տե՛ս Գասպար Ա., Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչութիւնը, Լոս Անջ., 1989, էջ 111-112:

³⁰ Քիւչիւք Ե., Վերապրումի պատմուածք, Աբդուլլահ Օջալանի յուշերն ու մտորումները (պարսկերէն), Թեհրան, 2000, էջ 48 եւ 49:

Ջեբիմի թուրքերեն կայք-էջի հեղինակները, մատնանշելով Ջեբիմի հայկական լինելու հանգամանքը, առանձին տեղ են յատկացրել գիւղի ներկայիս հայ բնակիչներին եւ լուսանկարներով ներկայացրել նրանց միջեւ առկայ ազգակցական կապերի մասին հետաքրքրական տեղեկութիւններ³¹:

Հիմնահարցն անխուսափելիօրէն արծարծուում է մինչեւ իսկ Թուրքիայի գրոսաշրջութեան ոլորտներում: Պատահական չէ, որ այս բնագաւառում աշխատող Սիման Թորթումը, 2006 թ. իր մի հրապարակման մէջ անդրադառնալով «կրիպտո-արմէններ»-ին, նրանց բնութագրում է պարզ ու դիպուկ սահմանմամբ: Նրա բնորոշմամբ, «թաքուն» հայերը «մուտւլմաններ են, որոնք պահպանում են իրենց բուն հայկական ինքնութիւնը: Իսկ նրանցից ոմանք էլ քողագերծուում են իրենց այդ թաքուն ինքնութիւնը»³²:

Մուշի, Բիթլիսի եւ Բինգօլի (Բիրակն) «թաքուն» հայութեան գիւղերի մասին վկայութիւններ կան նոյնիսկ թուրքական հակահայ քարոզչական կայք-էջերում: Նրանցից մէկուն ասում է, որ ներկայումս Գենչի եւ Մուշի շրջանում գոյութիւն ունի 25 հայկական գիւղ³³: Ակնարկւում է նաեւ Էրզինջանի (Երզնկա) Քեմախի շրջանում (Կամախ) չորս հայկական գիւղերի առկայութեան մասին³⁴:

Ներկայումս Մուշում ապրող Արմէն Մարտիրոսեանը, իր տուած հարցազրոյցում որոշակիացնելով եւ ընդհանուր գծերով բնութագրելով Մշոյ ներկայիս հայութեան վիճակը, վկայում է, որ «Մշոյ մէջ այսօր 1,000 հայեր են ապրում, որոնք ոչ ամուսնական եւ ոչ էլ այլ կապերով չեն շփուում քրդերի եւ թուրքերի հետ»³⁵:

Այսպիսով, «Հայ բնակչութեան էթնոկրօնական վերակերպումները Թուրքիայի Հանրապետութիւնում» թեմայի **աղբիւրագիտութիւնը** բաղկացած է հետեւեալներից.

- գրքեր, ատենախօսական եւ գիտական յօդուածներ, որոնք ունեն սկզբնաղբիւրային արժէք,
- ուղեգրութիւններ եւ յուշագրութիւններ,
- հայերէն եւ օտարալեզու տպագիր մամուլ,
- կայք-էջեր եւ էլեկտրոնային այլ աղբիւրներ:

Հիմնահարցի վերաբերեալ թուրքական արխիւային միւթեր ցաւօք չկան, կամ դրանք, հասկանալի պատճառներով, հասու չեն մեզ:

ԱՏԵՆԱԽՍՈՒԹԵԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄԸՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ:

Ատենախօսութիւնը բաղկացած է ներածութիւնից, երեք գլխից, եզրակացութիւնից, օգտագործուած սկզբնաղբիւրների եւ գրականութեան ցանկից:

ՆԵՐԱՇՈՒԹԵԱՆ մէջ հիմնաւորում է ընտրուած թեմայի գիտական

նշանակութիւնն ու արդիականութիւնը, նպատակն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանութիւնը, գիտական նորոյթն ու գործնական-կիրառական նշանակութիւնը, ներկայացում է օգտագործուած սկզբնաղբիւրների եւ գրականութեան տեսութիւնը:

³¹ <http://www.cibin.de>
³² http://www.pressbox.co.uk/detailed/Arts/Armenians_in_Malatya_soon_to_demand_the_reopening_of_the_church_79067.html.
³³ <http://www.ulkuocaklari.org.tr/arastr/teror/10.htm>.
³⁴ Նոյն տեղում:
³⁵ Դիտակ, Բեյրութ, 2004, ապրիլ-մայիս, թիւ 24, էջ 60:

Առաջին գլուխը՝ «ՀԻՄՆԱԴՆՈՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ», բաղկացած է երեք ենթագլխից: Այս գլխում հետաքրքրող հարցի շրջանակներում նախ ներակայացում են հիմնահարցի քննարկման տեսական հիմքերը, անդրադառնալով ազգային ինքնագիտակցության եւ պատկանելութեան սահմանման առկայ մտեցումների: Ապա առանձին ենթագլուխներում ճշտում են հիմնաւորում են հիմնահարցի պատմաժամանակագրական, աշխարհագրական եւ էթնոլոգիական մատուցման եւ քննարկման եղանակները:

Առաջին ենթագլխում՝ «Պատմաժամանակագրական հոլովոյթ», հիմնաւորում է նիւթի քննարկման եւ ներկայացման յարմար հոլովոյթը: Փորձ է արուել սոյն հոլովոյթը, հնարաւորութեան սահմաններում, համապատասխանեցնել Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական պատմութեան նշանակալից ժամանակագրական փուլերին: Համառօտ կերպով քննելով Թուրքիայի Հանրապետութեան անցած քաղաքական ուղին՝ յատկապէս Քենալ Աթաթուրքի իշխանութեան շրջանին յաջորդող տարիներին, պարզում են քաղաքական դաշտի պարբերական ապակայունութեան շրջաններ, որոնց յաջորդել են զինուորական յեղաշրջումներ կամ բանակի միջոցով կատարուած այլ տեսակի վարչաքաղաքական միջամտութիւններ:

Թուրքիայի Հանրապետութեան քաղաքական պատմութիւնից դատելով, նկատի ունենալով համաշխարհային եւ տարածաշրջանային հասարակական-քաղաքական խոշոր իրադարձութիւնները, ու, մասնաւորապէս, հաշուի առնելով հանրապետական Թուրքիայի հակահայ քաղաքականութեան համատեքստում տարբեր իշխանութիւնների մարտավարական մտեցումների տարբերութիւններն ու նրբութիւնները՝ նիւթի քննարկման համար առաջնորդուել ենք ժամանակագրական հետեւեալ փուլերով. 1923-1938 թթ., 1938-1950 թթ., 1950-1960 թթ., 1960-1980 թթ., 1980-1991 թթ. եւ 1991-2005 թթ. ժամանակահատուածները, որոնք ներկայացուած են երկրորդ գլխի համապատասխան ենթագլուխներում:

Ժամանակագրական փուլերով առաջնորդուելու մեր մտեցումն, ընդհանրապէս, համապատասխանում է թուրքագիտական եւ Թուրքիայի նորագոյն պատմութեան մի շարք մասնագէտների մտեցմանը:

Երկրորդ ենթագլխում՝ «Աշխարհագրական շրջագիծ», ճշտուել է հիմնաճահիցի աշխարհագրական ընդհանուր տարածքը: Ներկայումս Թուրքիան բաղկացած է 80-ից աւելի վարչատարածքային միաւորներից կամ նահանգներից, որոնցից 57-ը կազմում են մեր ուսումնասիրութեան պայմանական շրջագիծը (Անկարայից դէպի արեւելեան սահմանները): Այս 57-ից մտաւորապէս 18-ը համընկնում են ուիլսոնեան իրաւարար վճռի հիման վրայ սահմանուած Հայաստանի, իսկ մտաւորապէս 9-ը՝ Հարաւարեւմտեան Հայաստանի սահմանների հետ: Համարեայ 7-ը կարելի է առանձնացնել որպէս Կիլիկիայի սահմաններ եւ միւս 23-ը՝ պայմանականօրէն որպէս Փոքր Հայք եւ յարակից շրջաններ: Սոյն տարածքների սահմանագծման հարցում առաջնորդուել ենք ներքոյիշեալ հիմունքներով.

- Ուիլսոնեան իրաւարարութեամբ ճշտորոշուած Արեւմտեան Հայաստանի առանցքային նշանակութիւնը եւ նրա անմիջական հարեւանութեամբ գտնուող տարածքների նուազ նշանակութիւնը Հայկական հարցի եւ Հայ դատի պահանջատիրութեան մէջ:

• Հայութեան մինչեղեռնեան շրջանի ցրուածութիւնը, նրա վարչական եւ հասարակական կեանքի եւ յարաբերութիւնների ամբողջութիւնը:

Երրորդ ենթազխում՝ «Աշխարհագրական շրջագիծ», նախ արժարժել ենք այն հարցը, որ առարկայ հայութիւնը, կենցաղային-հասարակական ներքին յարաբերութիւնների տեսանկիւնից ուժացման ենթարկուելու իմաստով, ինչպէս նաեւ կրօնական, մշակութային եւ լեզուական յատկութիւնների պահպանման առումով այլատարր է եւ ներկայանում է նկարագրային տարբեր տիպերով:

Ապա քննարկելով առկայ տեսակետները եւ բաւարար հիմք ընդունելով ազգային գիտակցութեան տեսութիւնները, յանգել ենք խնդրոյ առարկայ հայութեանը տիպաբանական երեք գլխաւոր խմբի բաժանելու տրամաբանութեանը, ըստ հետեւեալի.

• «Պաշտօնական» հայութիւն, որը Հայ Առաքելական, Կաթողիկէ կամ Աւետարանական եկեղեցիներին կապուած համայնքների տեսքով գոյատեւել է զանազան նահանգներում եւ աւաններում: «Պաշտօնական» հայութեան կապը Կ. Պոլսի կազմակերպուած համայնքի հետ քիչ թէ շատ պահպանուել է մանաւանդ Կիլիկիայում:

• «Իսլամացած» հայութիւն, որը հիմնականում բաղկացած է պոնտահայ եւ հանձնահայ մանր ու խոշոր տոհմական խմբերից, որոնք բնակուում են սեւծովեան ափերիզում՝ պատմական Ջանիկից (Սամսունից) մինչեւ հայ-վրացական սահմանները երկարող տարածքներում:

• «Թաքուն» հայութիւն, որը բռնի կերպով եւ հիմնականում իր ֆիզիկական գոյութիւնը պահելու հարկադրանքի տակ դաւանափոխուել է հայկական պարբերական կոտորածների ժամանակաշրջանից (1894-1923 թթ.) սկսած եւ ներկայումս ապրում է աշխարհագրական մեր պայմանական չորս տարածաշրջանների բազմաթիւ քրդաբնակ եւ թուրքաբնակ գիւղերում ու գիւղակներում:

Երկրորդ զուխը՝ «ՎԵՐԱԿԵՐՊՈՒԱԾ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆՈՒՄ (1923-2005 թթ.)», բաղկացած է վեց ենթազխից: Այս ենթազխուխներում, պատմաժամանակագրական ճշտուած հոլովոյթի հիման վրայ, փորձ է կատարուել աշխարհագրական սահմանուած չորս տարածքներում ներկայացնել եւ քննարկել հայ էթնոկրօնական տարրի նշուած երեք տիպերի գոյութեան, գոյատեւման եւ վերակերպման համապարփակ իրավիճակը:

Առաջին ենթազխում՝ «Թուրքիայի Հանրապետութեան ձեւաւորման շրջան (1923-1938 թթ.)» ցոյց է տրվում, որ Թուրքիայի Հանրապետութեան հիմնադիր Քեմալ Աթաթուրքի իշխանութեան շրջանում հայութիւնը գտնուել է յետեղեռնեան քաղաքական, հասարակական եւ հոգեկան ծանր իրավիճակի մէջ եւ գոյատեւելու ելքեր է որոնել: Գոյատեւած հայերի փրկութեան պայմաններից էր կախուած մնում նրանց յետնորդների ազգային պատկանելութեան ճակատագիրը: Ջարդերից ու տեղահանութիւններից փրկուելու պատճառները, ըստ էութեան, բազում են եղել եւ տարաբնոյթ: Սակայն կարելի է մի ընդհանրական օրինաչափութիւն մատնանշել. այն է՝ իսլամացումը ձեւական նախապայման է հանդիսացել գոյատեւման համար:

Տիպաբանական առումով մեր սահմանած «թաքուն» հայութեան տեսակն այդ ժամանակահատուածում դեռևս իր լիարժէք տեսքով կերտուած չի եղել, սակայն բազմաթիւ հայ կանայք եւ որբեր գտնուել են թուրք կամ քուրդ ընտանիքների տիրապետութեան տակ: Եղել են նաեւ շօշափելի թուով հայեր, որոնք, իրենց իսլամ կամ արտասահմանցի ներկայացնելով, փրկուել են ստոյգ մահից: Յետեւաբար այս ժամանակահատուածում հայութիւն ասելով դեռ պէտք է հասկանալ վերապրող հայութեան խզուած, կտրուած եւ բարոյահոգեբանական իմաստով քայքայուած մի ընդհանրական զանգուած, մի կոնգլոմերատ՝ ցրուած ամբողջ երկրի տարածքով մէկ:

Աշխարհագրական առումով մեր սահմանած չորս տարածքներում, ուր որ գոյութիւն չեն ունեցել պետական կոշտ արգելքներ, այնտեղ նկատելի էին նախկին իներցիայով ընթացող հաւաքական հոգածութեան, մտածողութեան եւ գործունէութեան երեւոյթներ: Նման երեւոյթներ յատկապէս նկատվել են Փոքր Հայքի եւ յարակից շրջաններում, որոնք ուղղակիօրէն գտնուել են եւրոպական դիւանագիտութեան տեսադաշտում:

Այս ժամանակահատուածում, բազմաթիւ եւ յաճախ հակասական տեղեկութիւններ եւ հանգամանքներ հաշուի առնելով, կարելի է ամենայն չափաւորութեամբ եզրակացնել, որ մեր տիպաբանութեան առումով եւ «թաքուն», եւ «պաշտօնական» հայութեան թուի սկզբնական հանրագումարը կազմել է մօտաւոր թուով 330 հազար մարդ: Պէտք է նկատի առնել նաեւ այն, որ բազմաթիւ աղբիւրներ մատնանշում են «իսլամացած»-ների բարձր թուի առկայութիւնը:

Երկրորդ ենթազխում «Իսմէթ Ինճիլի նախագահութեան տարիներ (1938-1950 թթ.)» հիմնահարցը քննարկում է Թուրքիայի Հանրապետութեան պատմութեան «երկրորդ շրջան»-ում: Քենալ Աթաթուրքի կառավարման համեմատութեամբ այս փուլում հայութիւնը գտնուել է քաղաքական եւ հասարակական առաւել անտանցի ճնշման մթնոլորտում: Փաստօրէն Քենալի եւ Ինճիլի կառավարման ժամանակահատուածների հիմնական տարբերութիւնն այն է, որ Քենալի օրօք գոնէ՝ պոլսահայութիւնը համեմատական խաղաղ կեանքով էր ապրում: Ինճիլի օրօք պոլսահայութեան դէմ եւս ճնշումներ կիրառուեցին: Իսկ գաւառահայութեան դէմ հալածանքի քաղաքականութեան հարցում այս երկուսի միջեւ էական տարբերութիւններ չեն ուրուագծուում:

Նացիստական գաղափարներով ու յաղթանակներով ոգեւորուած թուրքական ցեղապաշտութիւնը՝ պանթուրքիզմը, այս շրջանում վերակազմակերպուեց եւ վճռականօրէն շարունակեց իթիհատական քաղաքականութիւնը՝ հայութեան ոչնչացման ուղղութեամբ: Իշխանութիւնների յատուկ կարգադրութեամբ 1942 թ. նոյեմբերի 11-ին փոքրամասնութիւնների համար ճշտուեց «Վարլըկ վերգիսի կանունու» կոչուող հարկային մի օրէնք (բառացիօրէն՝ «կապիտալ հարկ», «ունեւորութեան հարկ»), որի խստապահանջ գործադրումը հայութեան եւ արտահոսքի, եւ ազգային ինքնութիւնից ձեւականօրէն հրաժարուելու զխաւոր պատճառ հանդիսացաւ:

Կարելի է ասել, որ թուրքացման համատարած քաղաքականութեան ամենադաժան արգասիքները երեւան են եկել այս ժամանակահատուածում, որոնց հետեւանքով, մանաւանդ՝ գաւառներում, կատարելագործուել է «թաքուն» հայի կերպարը:

Հաշուի առնելով 1920-1930-ականներին Կիլիկիայի հայաթափման ծաւալը (մօտ 130 հազար մարդ), ինչպէս նաեւ Խարբերդ-Տիգրանակերտ-Դերսիմի հայութեան մասնակի բռնագաղթը (շուրջ 30 հազար մարդ), կարելի է ասել, որ Իսմէթ Ինոնիւի իշխանութեան այս ժամանակահատուածում գաւառներում ապրող «թաքուն» հայերի թիւը կազմել է առնուազն 170 հազար մարդ:

Երրորդ ենթազխում «Ղեմնկրատական» իշխանութեան ժամանակաշրջան (1950-1960 թթ.)» հիմնահարցը քննարկում է հանրապետութեան պատմութեան «երրորդ շրջան»-ում: Այս տասնամեակում Ջելալ Բայեարի նախագահութեան եւ Ադնան Սենդերեւի վարչապետութեան օրօք, հայութիւնը հասցրել է փոքր-ինչ շունչ քաշել՝ գոյատեւելու համար: Եթէ բացառենք ծայրայեղական աջ ուժերի կողմից հրահրուած 1955 թ. սեպտեմբերի 6-ի եւ 7-ի հակայոյն եւ հակահայ ամբոխային բռնարարքները՝ Կ. Պոլսում եւ Թուրքիայի արեւմտեան շրջաններում, հայութիւնն այս ժամանակահատուածում գտնուել է համեմատաբար տանելի պայմանների մէջ՝ իր համայնքային քայքայուած կեանքը վերակազմակերպելու առումով:

Ի տարբերութիւն Ինոնիւի բռնատիրութեան, «ղեմնկրատ»-ներն այս ժամանակահատուածում ընթացք էին տալիս սահմանափակ թուով եկեղեցիների վերաբացմանն ու օծմանը, գերեզմանոցների եւ միւս վագիֆների իրաւական հարցերի դրական լուծմանը եւ, իհարկէ, խօսքի սահմաններում արտօնում էին գաւառական մի քանի դպրոցների վերաբացումը:

Այս ժամանակահատուածում «պաշտօնական» եւ «թաքուն» հայութեան առաւել իրատեսական թուաքանակ կարելի է համարել 200,000-ը, որը եւ մատնանշուում է մի շարք աղբիւրներում:

